ՀՏԴ : 929:891.981.09 Պարտիզունի

Doi:10.54503/0135-0536-2025.2-292

ՎԱՉԷ ՊԱՐՏԻԶՈՒՆԻ

(Ծննդեան 110-ամեակի առթիւ)*

Խ. Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական համալսարանի հայագիտական ակունքներն արգասաւորած սիւներից մէկն է եղել Վաչէ Պարտիզունին (ծննդեան աւազանով՝ Թադէոսեան), որի անմնացորդ ծառայութիւնը գիտութեանը եւ հայ գրականութեան բազմահազար ուսուցիչների՝ յիսուն եւ աւելի տարիների մասնագիտական պատրաստման գործին վաղուց դարձել է նրա բերած նուիրումի բացառիկ խորհրդանշան:

Նա, ըստ էութեան, համալսարանի գիտամանկավարժական ներուժը ճանաչողական հունի մէջ դրած ամբողջական դէմքերից էր, հայ գրականութեան հարուստ պատմութեան ծալքերը սերունդներին շարունակաբար բացայայտած առաջնակարգ մանկավարժ: Երեսուներեք տարի շարունակ՝ 1951–1984 թթ., նա հմտօրէն ղեկավարել է հայ գրականութեան պատմութեան ամբիոնը՝ գործընկերներին եւ ուսանողութեանը խորհրդային ամբողջատիրութեան պայմաններում տոգորելով ազգային մշակոյթի առաջնայնութեան գիտակցութեամբ: Նա գիտելիքների շտեմարան էր. նրանից կարելի էր սերտել ոչ միայն գիտական ճանաչողութիւն, այլեւ՝ կենսակերպ:

Ինչ մնում է ինձ, եղել եմ նրա ասպիրանտը, նրա ղեկավարութեամբ պաշտպանել թեկնածուական ատենախօսութիւն: Անգամ նրա մահից յետոյ փորձել եմ ուսել աշխարհաճանաչողութեան եւ սկզբունքների պաշտպանութեան յամառ գծերը, որոնք ժամանակի մէջ դարձել էին նրա մտաւոր կարողականութեան ու մանկավարժական հմայքի գումարելիները: Դրանք առանձնացնում էին ոչ միայն գիտնականին եւ մանկավարժին, այլեւ, ինչն առաւել կարեւոր է, անհանգիստ քաղաքացուն եւ շիտակ մարդուն:

Երկու հանգամանք ստիպում է վերադառնալ բովանդակային առումով գիտնականի ուժի եւ հմայքի յարաբերութեանը, որոնք մատնանշում են, մի կողմից՝ իմացական հարցադրումների, գիտական առումով՝ չարենցեան «նշանի ահագնութիւնը», միւս կողմից՝ մարդկային անհատականութեան գործօնը՝ խօսքի ձգողութիւնը եւ վարքականոնը, որը շատերի համար էր ընդօրինակելի:

Մինչդեռ կենսագրական դժուարին ճանապարհը բացում է պարզ մարդու ուրուագծումի յայտնի ընթացք. ծնուել է 1915 թ. Արարատեան դաշտի Բուրաս-

---

** Ներկայացվել է 07. IV. 2025 թ., ընդունվել է տպագրության 11. VII. 2025 թ.:*

տան գիւղում, 1940-ին աւարտել է Երեւանի պետական համալսարանի պատմա-լեզուագրական բաժանմունքը, Հայրենական մեծ պատերազմի ժամանակ ծառայել խորհրդային բանակի զօրամասերում, ետպատերազմեան դժուարին ժամանակներում ընտրել բանասիրութեան բաւիղները:

Պետական համալսարանն աւարտելուց յետոյ անմիջապէս, եւ արդէն ընդմիշտ, աշխատանքի է անցել Խ. Աբովեանի անուան հայկական պետական մանկավարժական ինստիտուտում, ուր աշխատել է մինչեւ 1997 թ., մի ամբողջ կեանք՝ գիտականութեան նոր որակ հաղորդելով նրա ուղղութիւններին, ընդլայնելով հետաքրքրութիւնների շրջանակը՝ ընդհուպ մինչեւ արեւմտահայ գրական դարպասներ, պատրաստելով տասնեակ թեկնածուներ եւ դոկտորներ:

Նկատենք, որ քիչ է պատահում, երբ գրականագէտները գրչանուն են ընտրում, աւանդոյթ, որն աւելի ներյատուկ է ստեղծագործողներին: Վ. Թադէոսեանն այստեղ էլ առանձնանում է նախընտրութիւնների իմաստալից վերակառուցմով. յիրաւի, ո՞վ է ինքը, եթէ ոչ ազգային գրական թովչական պարտէզի մշակը՝ պարտիզպանը, այգեպանը: Ուրեմն՝ «էս գլխից»՝ «Պարտիզունին»: Այստեղ միայն այգեպանի ենթակայական դերակատարութեան նախընտրութիւնը չէ. գերիշխողն աւելի շատ այգու ճանաչումն է, այն այգին, որ աշխարհի գրական պարտէզների մէջ դիւթում է իր բոյրով:

Գիտական առաջին իսկ քայլերից մօտեցել է Տէրեանի ստեղծագործական բարդ ու հակասական աշխարհին, սակայն նկատելի տագնապով ու, ինչու չէ, նաեւ վախով. 1945-ին պաշտպանեց «Վահան Տէրեանի պօէզիան» ատենախօսութիւնը, ինչի համար ստացաւ բանասիրական գիտութիւնների թեկնածուի աստիճան:

Ահա «Խաչատուր Աբովեան» մենագրութիւնը, որը 1948-ին մանկավարժական ինստիտուտին նուիրեց որդիական գորովով: Արդէն 1952-ին՝ սոցիոլոգիական գրական յայտնի որոմի շրջանում, պարտիզպանը որսաց ազգայինի առողջ հատիկը. գիտնականի մօտեցումն արթնութեան ոգի էր՝ «էլ ետ առաջին փառքին հասնելու»[1] ձգտումով:

Ըստ խորքով գնահատութեան՝ առանձնացնենք գիտաճանաչողական տեսական բնոյթի մի մանրամասն. գաղտնիք չէ, որ Պարտիզունին, ի թիւս հետազօտական այլ նախաձեռնութիւնների, ձեռք զարկեց իրարից էապէս տարբեր երկու նուիրական երախտաւորների՝ Մուրացանի եւ Վահան Տէրեանի ռոմանտիզմների ընկալման՝ շատ հարցերում ներհակ, բայց տարբեր գնահատութիւններով հանդերձ՝ ամբողջացած հետագծին: Երկուսի պարագայում էլ գիտական նորարարութիւնը կշիռ է հաղորդել փնտռտուքի սլացքին:

Իր առաջին եւ յետագայ շրջանի աշխատասիրութիւններում նա խորապէս անդրադարձաւ Մուրացանի ստեղծագործական շերտերին, որոնցից յիշենք «Մուրացան. կեանքը եւ ստեղծագործութիւնը» (1956) ստուար գիրքը, ինչը միանգամից վկայեց գրականութեան պատմաբանի տիրական մուտքը, եւ որը 1957-ին արդէն գիտական հանրութեանը ներկայացրեց իբրեւ դոկտորական ատենախօսութիւն: Պրոֆեսոր դարձել է նոյն թվականին: 1965-ին ակամայ նորից յոբելեան կարծես ստացուեց. արժանացաւ գիտութեան վաստակաւոր գործչի կոչման:

Ի դէպ, զուտ ստեղծագործական խնդիրների լուծումները ենթադրում էին գիտական մշակումի որոշակի դժուարութիւն հոգու տարերքի եւ բանաստեղ-

[1] Խ. Ա բ ո վ յ ա ն. Երկեր, Երեւան, 1984, էջ 145:

ծական տիպաբանական զարգացման քննութեան ճանապարհին, երբ անհրաժեշտ էր իւրացնել նիւթն ու գաղափարը, իրարից զատել զգացումն ու տեսողական ճանաչողութիւնը:

1960-ական թվականներին նա ձեռնամուխ եղաւ ծրագրային աշխատանքների՝ «Գրականութեան ուժն ու հմայքը» (1963), ինչից յետոյ իւրատեսակ տուրք-վերադարձ կատարեց Տէրեանի աշխարհ՝ հրատարակելով «Տէրեան. ստեղծագործութիւնը» (1968) վերլուծական մանրակրկիտ եւ ամբողջական մենագրութիւնը, որին 1970–1980-ական թվականներին յաջորդեցին «Իսահակեանը եւ Տէրեանը» (1975) զուգահեռների երկկենտրոն գիրքը, «Տաղանդի ուժը» (1977) եւ «Պայծառ համաստեղութիւն» (1987) յօդուածների ժողովածուները:

Ճիշդ է, խորհրդահայ գրականագէտին շահագրգռել են ազգային գրականութեան ուշագրաւ մեծութիւններ, ի շարս այլոց՝ Մ. Նալբանդեան, Ալ. Շիրվանզադէ, Յովհ. Թումանեան, Ե. Չարենց, նորագոյն շրջանում դիմագիծ բռնած շատ ուրիշներ, բայց Վ. Պարտիզունու աշխարհում Վ. Տէրեանն առաջին սիրոյ հմայք ունի: Նրա հետ տէրեանագիտութիւնը երկար ճանապարհ է անցել, աճել ու կարծրացել: Ընկալման զգացմունքային վերաբերմունքից, պաշտամունքից, ազդեցութեան յախուռն դպրոցից մինչեւ գիտական բանավէճերի ու ճշմարտութիւնների հանգրուաններ. ահա՛ հասողութեան այն ճանապարհը, որը յաղթահարել է գրականագէտը, ինչը նրան ոլորաններով տարել է բարձունքի, ջրդեղել, դարձրել գիտնական:

Վ. Տէրեանն ի՛նքն էր գլխաւոր ստուգիչ զգայաչափը՝ արդեո՞ք այդ ճանապարհը «թեթեւ» էր ու «խնդում»: Յաճախ նա էլ դժուարանում էր մենութեան որեւէ պահի անկեղծ չշնջալ՝ «Այնպէս անլոյս է այսօր / Առաւօտս լուսացել»[2]: Եւ ինչքա՜ն ներքին գաղտնիքներ ունէր տէրեանական յագեցած տողը...: Յաճախ արդեօք չե՞ն խաչուղուել բանաստեղծի ու նրա մեկնաբանի, աւելին՝ ընթերցողի եւ քերթութեան յուշած ճակատագրերը, որոնք քմահաճ մեկնութեան տրամադրութիւնից կարող էին բախել հոգեբանութեան անծանօթ դռներ: Ո՞վ կարող է որսալ, թէ որքա՜ն է յուսախաբութիւնը բախել նրանց երկուսի դռները՝ ներքնապէս հարազատացնելով անհատին բանաստեղծական անակնկալ գիւտի հետ:

Վ. Պարտիզունին վիթխարի դեր ունի տէրեանասիրութիւնը տէրեանագիտութեան վերափոխելու, գիտական նոր հայեացքի ձեւաւորման ճանապարհին: Եւ դա այն պարագայում, երբ ինքը սկսեց բնական տէրեանասիրութեան վայրկենական տրամադրութիւնից առանձնացնելով գիտական մեկնութեան սահմանը, եւ ընդհակառակը: Կարելի է ասել, որ աւելի քան յիսնամեայ գործունէութեան շրջանում Տէրեանը եղել է առանցքային եւ մշտահմայ հեղինակ, արժանացել բոլորակողմ ուշադրութեան, ուղղորդել:

Վ. Պարտիզունին առանձնակի ուշադրութիւն է նուիրել քնարերգակի ճանաչողութեան պատմահամեմատական մեթոդին: Համադրական լայն քննական կարկինով փորձել է տեսնել նոր եւ նորագոյն գրականութեան սահմանագծում տերեանագիտական գեղագիտութեան զարգացման տիպաբանութիւնը՝ միջավայրի մէջ ներառելով նրա հզօր ժամանակակիցներին՝ Յովհ. Թումանեանին, Աւ. Իսահակեանին, Ե. Չարենցին:

---

[2] Վ. Տ ե ր յ ա ն. Երկերի ժողովածու 4 հատորով, հ. 1, Երեւան, 1972, էջ 135:

Պատմաբանասիրական որոնումները նա տարել է վերլուծական փաստարկուած, համոզիչ, միշտ աշխոյժ ու ինքնատիպ ոճով՝ մեծ մասամբ փորձելով լուծել վիճայարոյց, կնճռոտ հարցականները: Վ. Պարտիգունին առաջիններից մէկն էր, որ հայ գրականութիւնը ու նրա՝ անցեալ դարասկզբի նորագոյն ղէմքերին, յատկապէս՝ Վ. Տէրեանին, փորձեց գնահատել ռուս եւ համաշխարհային գրական տեսողութեան հունով, ռոմանտիզմի, սիմվոլիզմի նորատիպ շաղախով: Եւ դա՝ այն ժամանակ, երբ ասում էին՝ ինչքան «իզմերից» հեռու, այնքան ապահով: Աւելին՝ թւում էր, թէ ինչքան Վ. Տէրեանին «մօտեցնես» իրապաշտ գնահատութեան, այնքան լաւ նրա համար: Տիրապետող «պսեւդոգիտական» այս նորաձեւ տարազներից Վ. Պարտիգունին աշխատում էր հեռու պահել «իր» բանաստեղծին: Եւ դա նրան մեծ մասամբ յաջողւում էր:

Տէրեանը ձգողական հզօր ուժ էր Վ. Պարտիգունու համար, որի նորովի բացայայտումները դարձան «Վահան Տէրեանի հետ» (1989) եւ թերեւս լաւագոյն՝ «Տէրեանի կենսապատումը» (1984) գրքերը: Դժուարութիւնների առկայութիւնը գրականագէտը խորութեամբ էր զգում՝ քաջ ծանօթ լինելով Վ. Տէրեանի ինտիմ կեանքին, հարազատների՝ երբեմն զգացական հակադարձումներին: Յիրաւի, բանաստեղծի գրական ստեղծագործական ակունքների ճանաչողական իւրացումը բաւական երկար է տեւել: Անտեսելու չէր «նիւթի դիմադրութիւնը». բազում տէրեանական մենագրութիւնների մէջ լաւագոյն աշխատանքը ուշ՝ միայն կեանքի վերջին շրջանում «տրուեց»: Ընդ որում՝ Տէրեանի գիտական կենսագրական շարադրումը կառուցուած էր համակողմանի խոր գնահատութեամբ, առաջին անգամ շրջանառուած արխիւային վկայագրերի ճանաչողութեամբ, հին փաստերի նոր մեկնութեան հանդերձով: Արդէն այդ տարիներին տէրեանագիտութեան ակներեւ նուաճումները, բնականաբար, կապւում էին իր անուան հետ:

Տէրեանը բանաստեղծական շարային մտածողութեան, թեմատիկ ընդգրկումների նախասիրութեամբ առաջնորդուած վարպետ է, չգերազանցուած թերեւս ողջ հայ պօէզիայում: Յորդում էին նրա գեղարուեստական մտքի անակնկալ ոլորանները: Ինքն էլ դա քաջ գիտակցում էր՝

Ո՜վ գերագոյն փառք, վերջին հիացմունք,
Արիւնիր սիրտըս քո համբոյրներում:
Թափուէք, իմ երգեր, արցունք առ արցունք
Այնտեղ, ուր մարդկանց տանջանքն է լռում...[3]

Պարտիգունին որոնում է բանաստեղծական ենթախորքի բազում ծալքեր ու վերհանում պատկերների հոգեպարար շերտեր բոլոր շարքերում՝ «Գիշեր եւ յուշեր»ից մինչեւ «Կատուի դրախտ» կամ թէկուզ երկու հատուածով գրուած «Վերադարձ»: Վ. Տէրեանի շարքերի կազմումի մէջ նորարարական էր Վ. Պարտիգունու մօտեցման ջիղը: Նա մտայղացաւ տէրեանական երգերից առանձնացնել «Զօների գիրքը» (2002), ինչը բանաստեղծի բուն ցանկութիւնն էր՝ ներմուծելով «կամօքն Վահան Տէրեանի» թուով 53 քերթուած՝ մեկնաբանութիւններով, ծանօթագրութիւններով: Գաղափարը վաղուց էր գիտնականի աշխատանքային օրակարգում. յօդուածներ էր գրել, նախապատրաստել խնդիրը, ուրուագծել քննութեան ենթակայ բանաստեղծութիւնների շրջանակը: «Զօների գիրքը», սակայն, լոյս տեսաւ տէրեանագէտի մահից (1997 թ.) հինգ տարի

[3] *Նոյն տեղում, էջ 118:*

անց, նրա դստեր՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուզան Թադէոսեանի նախաձեռնությամբ:

Շարքերի նախընտրության սկզբունքը Վ. Տէրեանին կանգնեցրել էր «Երկիր Նաիրի»ի ծննդեան առջև՝ «Մթնշաղի անուրջներ» գրքից տարիներ անց՝ արդէն 1910-ական թվականներին: Թեմաների սահմանազատումի ջիղն ակնյայտ է, սակայն այն, ինչպէս որսում է գրականագէտի աչքը, անվրէպ ցոյց է տալիս հայրենի եզերքը, լեզուական անաղարտության, ոճային պարզ կառոյցի ըմբռնման միասնականությունը, որ բերել է իր հետ բանաստեղծը 1900-ականներից: «Անել վշտի մէջ» գտնուող հայրենիքի առթած տրամադրությունը «Երկիր Նաիրի» շարքի երգչի հոգու հաւաքական պոռթկումն է: Դեռ առաջին գրքի էջերում առկայծող «քաղցր արբանքը» պիտի ամբողջանար հենց այստեղ՝

Դու հպարտ չես, իմ հայրենիք,
Տրտում ես դու եւ իմաստուն.
Կիզում է քեզ մի հուր կնիք,
Մի հըմայող ու հին խոստում:
Եւ միթէ այդ վշտիդ համար
Չեմ սիրում քեզ այսպէս քնքուշ
Եւ խոնարհւում քեզ պէս յամառ,
Օ, հայրենիք, դառն ու անուշ[4]:

«Երկիր Նաիրի» շարքում բանաստեղծի խոհերը ընթերցողին առաջնորդում են տարբեր հերոսների միջոցով՝ տրամադրության տարբեր վիճակների, հոգեբանության անգամ հակադիր բեւեռների առաջ կանգնեցնելով ե՛ւ բանաստեղծին, ե՛ւ ընթերցողին: Նրանք մե՛րթ երազայնության, մե՛րթ տառապանքի ներհակ պահերի կրողներն են, մե՛րթ էլ՝ «հայրենական տան» մոլար սիրահարի անհուն տխրությանը վարժեցնող անհայրենիք տրուբադուրներ: Ահա ամէնից «հակասական» քերթուածը, որի առթիւ գրականագէտը իր առջեւ խնդիր է դրել պարզելու Վ. Տէրեանի մտքի անակնկալ թռճուկը.

Ես անջատուած եմ հայրենի հողից,
Հայրենի տունը՝ իմ սրտին օտար,
Ինձ այրում է միշտ մի անյագ թախիծ, –
Յաւիտեան դիւթող անյայտ ճանապարհ...[5]

Վ. Պարտիզունին 1968-ին այս առթիւ գրում է. «Թող խոստովանանք լինի, որ տարիներ շարունակ մտածելուց յետոյ էլ հաստատ չգիտենք, թէ «Ես անջատուած եմ հայրենի հողից» բանաստեղծության[6] ենթիմաստները, որոնք են: Արդեո՞ք չգիտէր. գիտէր, բայց չէր կարող բացել քաղաքական ենթախորքը՝ Արեւմտեան Հայաստանից պարտադրուած «անջատուածությունը»: Ընդունելի՞ է արդեօք «հայրենի տունը՝ իմ սրտին օտար» տէրեանական մտքի ուղղագիծ վերծանման խօսքը: Տէրեանագէտը բաւարարւում է ներթաքոյց անզօր մտայ-

---

[4] *Նոյն տեղում, էջ 243:*

[5] *Նոյն տեղում, էջ 53:*

[6] *Վ. Պարտիզունի. Վահան Տերյան. ստեղծագործությունը, Երեւան, 1968, էջ 213:*

նութեամբ. «Այս բանաստեղծութիւնը միայն հայրենասիրական չէ, այլ արտայայտութիւն բաւական հակասական տրամադրութիւնների»[7]: Նա բերում է նոր սահմանագիծ, երբ գրականագէտին գրաքննութիւնը եւս մէկ անգամ յուշում է լինել ուշադիր. չէ՞ որ Ջնհալի շրջանն աւարտուած է, ուրեմն՝ նոր խօսքը կարկամած պիտի լինի: Մասնաւորապէս մեկնաբանութեան շերտերից դուրս պիտի լինի տէրեանական խռովքի առաւել քան վտանգաւոր, գրեթէ պայթուցիկ ակնարկը, ինչպէս իր նախասիրած Շաղ Բողէրի «մելամաղձի» երգերը, որոնք նա թարգմանում էր սիրով: Տէրեանը յայտարարում է՝

Միեւնոյն է ինձ Հիւսիս թէ Հարաւ, –
Մի խենթ տագնապ կայ իմ հիւանդ սրտում,
Կայ իմ հոգու մէջ մի անյագ ծարաւ.
– Յաւիտեան օտար, հայրենական տո՛ւն ...[8]

Պատահական չէին Պարտիզունու գիտական աշխարհում տէրեանական այդչափ ընդդրկումները: Նոր գնահատութեան արժանացաւ նրա կազմած «Վահան Տէրեանը ժամանակակիցների յուշերում» ստուար հատորը (1964), ուր գրականագէտը վերհանել էր անցեալ դարի 10-ական թվականների բարդ յարաբերութիւնների ոչ միաշերտ շղթան՝ կապուած քնարական երգչի կեանքի ու գործունէութեան հետ, պատմական անձերի գրողի խորը ճանաչողութեան աղերսները՝ ընդգծուած քաղաքական ու ընկերային հակուածութեամբ, տարաբնոյթ բանասիրական ճշգրտումներով: Ինչպէս անտեսել ականաւոր տէրեանագէտի խմբագրութեամբ կազմուած, բանաստեղծի երկերի եռահատորի (1960–1963) հիման վրայ կատարած շարունակական, այս անգամ՝ քառահատոր ժողովածուն (1972–1979)՝ ծաւալուն, խորաշերտ ծանօթագրութիւններով, որը առայսօր մնում է Վ. Տէրեանի երկերի յարաբերականօրէն ամբողջական լաւագոյն հաւաքածուն: Աւելացնենք, որ նա, ըստ էութեան, նախապատրաստում էր երգչի՝ իր այնքան փայփայած ակադեմիական լիակատար ժողովածուի կազմումն ու հրատարակումը, տէրեանագէտների գիտակ խումբ ձեւաւորելը, որոնք ժամանակի մէջ աւարտի պիտի հասցնէին թերեւս առաջնահերթ յանձնառութիւնները: Վ. Պարտիզունին ափսոսում էր, որ դեռեւս ի յայտ չեն եկել ամբողջական Տէրեանի ժառանգութեան մէջ կորստեան մատնուած շուրջ 400 քերթուածները, որոնց փնտռտուքի արդիւնքին անվերապահօրէն հաւատում էր անգամ մահուան օրերին:

Իբրեւ ամփոփում ընդգծենք, որ մահից այսքան տարիներ յետոյ էլ Վաչէ Պարտիզունին մնում է առաջատարներից տէրեանագէտների շարքում:

ՍՈՒՐԷՆ ԴԱՆԻԷԼԵԱՆ

Բ. գ. դ., պրոֆ., Խ. Աբովեանի անուան ՀՊՄՀ հայ նոր եւ նորագոյն գրականութեան եւ նրա դասաւանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ: Գիտական հետաքրքրութիւնները՝ Սփիւռքի գրական աշխարհի կենսապատում, արեւմտահայ կրթական խնդիրներ: Հեղինակ է 9 գրքի և 100-ից աւելի հոդվածների:
ORCID: 0000-0001-7033-2041. danielyansuren21@aspu.am

[7] *Նոյն տեղում, էջ 212:*
[8] *Վ. Տ ե ր յ ա ն. Նշվ. ժող., էջ 53:*